

**ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՁԱՆ**  
**«ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋ ԵՐԵԽԱՆԵՐ» ՀԱՐՑԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ**  
**2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ**  
**ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**

Հարգելի ծնող կամ խնամակալ,

Ձեր երեխան հրավիրվում է մասնակցելու Կալիֆոռնիայի ուսումնական հաստատության կողմից հովանավորված մեր դպրոցի «Կալիֆոռնիայի առողջ երեխաներ» հարցաշարին (CHKS): Սա շատ կարևոր հարցաշար է, որը կնպաստի մեր պատանիների առողջությանը և բարեկեցությանը, դպրոցի ուսումնական միջավայրի բարելավմանը և կօգնի պայքարելու զանազան խնդիրների դեմ, ինչպիսիք են՝ քմրանյութերի չարաշահումը և բռնությունը: Հարցաշարին մասնակցելը պարտադիր չէ: Եթե չեք ցանկանում, որպեսզի ձեր երեխան մասնակցի, ապա պետք է դպրոցին տեղյակ պահել:

**Հարցաշարի բովանդակությունը:** Հարցաշարի միջոցով տեղեկություններ են հավաքվում պատանիներին տրամադրված աջակցությունների, դպրոցի հետ կապվածության և ուսման խոչընդոտների, դպրոցի անվտանգության և առողջության հետ կապված հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ ֆիզիկական գործունեությունը և սննդակարգային սովորությունները, ինչպես նաև ակոհոլի, ծխախոտի և այլ քմրանյութերի օգտագործման, ընկճվածության, ինքնասպանության և սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունները:

Կարող եմ հարցաշարի բովանդակության մասին տեղեկություններ ստանալ դպրոցի գրասենյակից կամ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի կայքէջից՝ [www.gusd.net](http://www.gusd.net), գտնել այն «Departments»-ի ներքո՝ ընտրելով «Student Support Services»-ը և սեղմելով «California Healthy Kids Survey»-ի վրա:

Այս հարցաշարի արդյունքները վերածվում են կրթաշրջանային և վարչաշրջանային մակարդակի CHKS զեկույցների: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի զեկույցները տեսնելու համար այցելեք <https://calschls.org/reports-data/search-lea-reports> և մուտքագրեք կրթաշրջանի անունը:

**Մասնակցությունը կամավոր է:** Հարցաշարին մասնակցող աշակերտները կարող են չպատասխանել այն հարցերին, որոնց չեն ցանկանում պատասխանել և ցանկացած պահի կարող են դադարեցնել այն:

**Մասնակցությունը գաղտնի է:** Ոչ մի անուն չի արձանագրվում կամ կցվում հարցաշարի տվյալների թերթիկին: Արդյունքները կենթարկվեն վերլուծության միայն խիստ գաղտնի հսկողության ներքո:

**Հարցաշարի անցկացում:** Հարցաշարը կանցկացվի 2020 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը: Այն կտևի մոտավորապես մեկ դասաժամ (50 րոպե) և կանցկացվի 9-րդ կամ 11-րդ դասարանում նշանակված որևէ դասաժամին:

**Հնարավոր ռիսկ:** Ձեր երեխային ֆիզիկական վնաս հասցնելու հայտնի ռիսկեր չկան: Հոգեբանական կամ սոցիալական վնասների ռիսկերը չեն չին են: Վերջին 20 տարվա հետազոտությունները ոչ մի վնաս չեն գրանցել: Հազվադեպ որոշ անհարմարություններ կարող են առաջանալ հարցերից: Դպրոցի խորհրդատվական ծառայություններն առկա ցանկացած հարցի դեպքում:

**Լրացուցիչ տեղեկություններ:** Հարցաշարը պատրաստվել է հանրային, ոչ շահութաբեր ուսումնական WestEd հաստատության կողմից: Հարցաշարի վերաբերյալ որևէ հարց ունենալու պարագայում զանգահարե՛ք Աշակերտների աջակցման ծառայությունների բաժնի ղեկավար Դևոն Գոլդբերգին, (818) 241-3111 ներքին 1285 հեռախոսահամարով:

**CHKS-ին չմասնակցելու ձև**

Վերադարձնելով այս ձևը՝ տեղեկացնում եմ, որ **չեմ ցանկանում**, որ իմ երեխան մասնակցի CHKS անվամբ հարցաշարին:

(Խնդրում եմ տպատառ գրել)

Իմ երեխայի անուն/ազգանունն է \_\_\_\_\_

Դասարան \_\_\_\_\_

Ուսուցչի անուն/ազգանունն է \_\_\_\_\_

Ստորագրություն \_\_\_\_\_

Ամսաթիվ \_\_\_\_\_